ԵՊԲՀ ՔՈԼԵՋԻ «ԴԵՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԴԱՐԶ ԿԱՊԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ուսանողների մասնակցություն 83 (85%)

Հետադարձ կապին մասնակցության բարձր տոկոսը վկայում է ուսանողների բարձր ակտիվության մասին և ապահովում է արդյունքների վստահելիությունը:

1. Նշեք որ կուրսում եք սովորում



2. Ձեր միջին առաջադիմությունը՝



3. **Որքանո՞վ եք բավարարված ուսումնառության տարիների ընթացքում Ձեր ստացած տեսական գիտելիքներով** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ)



Գրաֆիկական տվյալները ցույց են տալիս, որ գերակշռում են դրական գնահատականները: Սա նշանակում է, որ ուսանողների մեծ մասը բավարարված է ստացած տեսական գիտելիքներից:

4. **Որքանո՞վ եք բավարարված ուսումնառության տարիների ընթացքում Ձեր ստացած գործնական հմտություններով** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ)



Գրաֆիկում դրական գնահատականները նույնպես գերակշռում են, սակայն տեսական բաղադրիչի համեմատ նկատվում է ցածր գնահատականների ավելի մեծ մասնաբաժին: Սա ցույց է տալիս, որ գործնական բաղադրիչը ունի բարելավման կարիք:

5. **Մասնագիտական առարկաների ուսումնասիրման ժամանակ բավարար չափով հասանելիություն ունեցել եք անհրաժեշտ գործիքների, տեխնիկական միջոցների, նյութերի**

(գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ հասանելիություն չեմ ունեցել, 5-ը՝ լիովին բավարարված եմ)



Գրաֆիկում հիմնականում միջինից բարձր բավարարվածություն է արձանագրված:
Սակայն առկա են նաև ցածր և միջին գնահատականներ, ինչը վկայում է լաբորատոր ռեսուրսների կամ նյութերի ոչ լիարժեք բավարարության մասին որոշ խմբերի համար:

6. **Որքանով եք բավարարված անհրաժեշտ գրականության հասանելիությամբ** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ)



Մյուս չափանիշների հետ համեմատած, թերևս ամենախնդրահարույց հարցը գրականության հասնելիությունն է:

7. **Որքանով լիարժեք** և **արդյունավետ են օգտագործվում դասաժամերը դասախոսների կողմից** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ ոչ լիարժեք և անարդյունավետ, 5-ը՝ լիարժեք և արդյունավետ)



Գրաֆիկական արդյունքները ցույց են տալիս, որ դասախոսների կողմից դասաժամերի օգտագործումը հիմնականում գնահատվում է արդյունավետ:

8. **Ընդհանուր առմամբ որքանով եք բավարարված հանրակրթական առարկաների դասավանդման որակից** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ)



9. Ընդհանուր առմամբ որքանով եք բավարարված մասնագիտական առարկաների դասավանդման որակից (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ**)**



8րդ և 9րդ գրաֆիկների համեմատությունը ցույց է տալիս, որ մասնագիտական առարկաները գնահատվում են ավելի բարձր, քան հանրակրթականները:Սա վկայում է, որ ուսանողները առաջնահերթ են համարում մասնագիտական ուղղվածությունը և դրա որակը:

10. Ինչը և **ինչպես կփոխեիք ուսումնական գործընթացը առավել լավը** և **արդյունավետ դարձնելու համար** (եթե առաջարկը վերաբերվում է կոնկրետ առարկային/ամբիոնին, նշեք առարկայի անվանումը , խնդիրը և/կամ առաջարկությունը):

Սույն հարցին պատասխանել է 33 ուսանող, որոնց պատասխաններն առանց խմբագրման ներկայացված են հալված 1ում

Ուսանողների կարծիքների ընդհանրացում

Ուսանողների կարծիքների վերլուծությունը ցույց է տալիս, որ հիմնական դժգոհությունները վերաբերում են ոչ թե ծրագրի բովանդակությանը, այլ՝

- Դասախոսական կազմի աշխատանքի որակին և վերաբերմունքին
- Ֆիզիոլոգիա և դեղագործական քիմիա առարկաների ծանրաբեռնվածությանը
- Գործնական ուսուցման սահմանափակությանը
- Դասացուցակի և ցիկլերի անհամաչափ կազմակերպմանը
- Օնլայն գրքերին

Եզրակացություն

Ծրագիրը ընդհանուր առմամբ գնահատվում է դրական, սակայն անհրաժեշտ է՝

1. Առանձին ամբիոնների դասավանդման որակի գնահատում և մեթոդական վերանայում
2. Ֆիզիոլոգիայի և դեղագործական քիմիայի ծրագրերի հարմարեցում քոլեջի մակարդակին
3. Գործնական բաղադրիչի և կազմակերպչական գործընթացների բարելավում

Վերոնշյալ քայլերը կբարձրացնեն ուսուցման արդյունավետությունն ու ուսանողների բավարարվածության մակարդակը:

Առաջարկություններ «Դեղագործություն» կրթական ծրագրի բարելավման համար

Հետադարձ կապի վերլուծության հիման վրա առաջարկվում են հետևյալ բարելավման ուղղությունները.

1.Դասավանդման որակի բարձրացում

- Վերանայել որոշ ամբիոնների (մասնավորապես՝ դեղագործական քիմիա, ֆիզիոլոգիա) դասավանդման մեթոդները:
- Կազմակերպել դասախոսների վերապատրաստումներ և մեթոդական սեմինարներ:

- Բարելավել դասախոս–ուսանող հաղորդակցությունը և ակադեմիական էթիկան:

2.Ուսումնական ծրագրի և **բովանդակության օպտիմալացում**

- Ֆիզիոլոգիայի դասընթացը հարմարեցնել քոլեջի կրթական մակարդակին:
- Վերանայել առարկաների ժամաբաշխումը և տեսական և գործնական բաղադրիչների մասնաբաժինները:

3. Գործնական ուսուցման կատարելագործում

- Ավելացնել պրակտիկ և լաբորատոր դասերի քանակը:
- Ապահովել անհրաժեշտ դեղանյութերով և լաբորատոր նյութերով:
- Ներդնել ավելի շատ կիրառական և մասնագիտական հմտություններ զարգացնող դասընթացներ:

4. Ուսումնական գործընթացի կազմակերպման բարելավում

- Վերանայել դասացուցակի կազմման սկզբունքները:
- Ավելի վաղ տրամադրել ուսումնական նյութերը և դասացուցակները:
- Վերանայել առարկաների ցիկլերի տևողությունը:

5. Ուսումնական ռեսուրսների և **գնահատման համակարգի կատարելագործում**

- Օնլայն նյութերին զուգահեռ ապահովել նաև տպագիր դասագրքեր:
- Կիրառել ավելի թափանցիկ և արդար գնահատման մեխանիզմներ:
- Ներդնել ընթացիկ գնահատման և ակտիվության խրախուսման համակարգ:

Հավելված 1

Ստորև ներկայացվում է 33 ուսանողների պատասխաններն առանց խմբագրման՝

1. Դեղ. քիմիայի ամբիոնի դասախոսների վերաբերմունքը վերանայել ուսանողների նկատմամբ
2. Պրակտիկ դասընթացները պետք է ավելի շատ լինեն կարծում եմ
3. Օնլայն գրքերը փոխարինվեն դասագրքերով
4. Ցանկանում եմ տեղեկացնել դասացուցակի հետ կապված որոշ խնդիրների մասին: Որոշ օրերին դասաժամերը խիստ ծանրաբեռնված են, իսկ առանձին առարկաներ տեղադրված են անընդմեջ, ինչը դժվարացնում է արդյունավետ ուսուցումը: Առաջարկում եմ նաև վերանայել ֆիզիոլոգիայի դասընթացի ծրագիրը և այն մշակել հատուկ քոլեջի ուսանողների համար: Ներկայումս օգտագործվող համալսարանական ծրագիրը լիովին չի արտացոլում քոլեջի կրթական, մասնագիտական ուղղվածությունը: Առանձին կազմված ծրագիրը հնարավորություն

կտա նյութը ներկայացնել ավելի համակարգված, հասանելի, ինչը կբարձրացնի ուսուցման արդյունավետությունը:

5. Կրթության ձևը կփոխեի հետևաբար Կրթության և Գիտության նախարարին ամենայն հարգանքով

6. Դեղ-քիմիա ամբիոնի դասախոսների որակավորումը շատ ցածր է խնդրում ենք շտկել այդ ամենը

7. Ավելի շատ կարելի էր ուշադրություն դարձնել բնագիտամաթեմատիկական առարկաներին, քան հումանիտար: Նախ՝ բնագիտամաթեմատիկական առարկաները այս կիսամյակ ավելի քիչ են, քան հումանիտարները, երկրորդը՝ այդ առարկաները ավելի բարդ են, պետք է դրանց ավելի շատ դասաժամեր տրամադրվեն, քան հումանիտարներին և երրորդը՝ կենսաբանությունը և քիմիան կարծում եմ, որ մեր մասնագիտության համար ամենակարևոր առարկաներն են:

8. Ֆիզիոլոգիայի թեստերը փոխել,խայտառակություն է

9. կցանկանայի ամբիոններին գործնական աշխատանքներ տրամադրելու ավելի մեծ հնարավորություն ընձեռնվեր, օրինակ դեղերի տեխնոլոգիայի ամբիոնին տրվեին բավարար քանակով դեղանյութեր պատրաստման համար

10. Քոլեջի 1ին կուրսեցիների դասերը համալսարանում ընթանան

11. Ուսումնառության նյութերը նախապես տալ ավագ դպրոցում դասերը շուտ սկսել Անգլերեն առարկան մանրամասնորեն բացատրել

12. Քոլեջի առաջին կուրսը 1ին հերթ լինի

13. Կարծում եմ 3րդ կուրսում ֆիզկուլտուրան միայն անհարմարություններ է պատճառում

14. Ցանկանում եմ ներկայացնել մի քանի խնդիրներ, որոնք, իմ կարծիքով, բացասաբար են ազդում ուսման արդյունավետության վրա: Մաթեմատիկայի դասախոսը նյութը լիարժեք ու հասկանալի չի բացատրում, սակայն մեզանից պահանջում է ավելին, քան դասերի ընթացքում ներկայացվում է: Քիմիայի ամբիոնի դասախոսական կազմի աշխատանքի որակը, իմ կարծիքով, կարիք ունի վերանայման: Ֆիզիոլոգիայի ամբիոնում պահանջվում է շատ կարճ ժամանակում մեծ ծավալի նյութ սովորել, ինչը ուսման արդյունավետության վրա բացասաբար է ազդում:

15. Առաջարկությունս վերաբերում է օտար լեզվի դասերին, աշակերտներ կան, ովքեր նախորդ դպրոցում այլ օտար լեզու են ուսումնասիրել ու դժվար են սովորել մի քանի տարվա ուսումնական ծրագիրը:

16. Կցանկանայի դասերը սկսվեին առաջին հերթով, քանի որ դա կփախեր ուսումնական որակը, որովհետև միշտ վերջին ժամը լրիվ չի դասավանդվում, կուզեի որ ուսումնառության

ժամանակ պատասխանեի այն հարցերին որոնք ուսուցանել են, գրվածը չի համապատասխանում պահանջվածի հետ:

17. Որոշ ուսուցիչների կողմից առավել լավ վերաբերմունքը:

18. Ձեռներեցությունը 30 էջ դաս է, հատկացրել են 2 շաբաթ, իսկ ֆիզիոլոգիան կրկնապատիկ անգամ դժվար էր հատկացրել էին 4 դասաժամ: Դասախոսներ կան նյութը չեն բացատրում նորմալ: Իսկ քիմիան առաջին կուրսում ընդհանրապես վատ մակարդակով ենք անցել, ես կասեի սարսափելի ու քննությանը եղել են այնպիսի բաներ, որ մենք չենք անցել: Ու ընդհանրապես թող հանեն անվճար, վճարովի ու դրա փոխարեն թող լինի տոկոս: Ու դա մոգի միջոցով հաշվեն: Անարդարա, երբ չիմացողը ստանում է ավելի բարձր քան իմացողը(արտագրության և այլ միջոցառումներով):

19. Ֆիզոլոգիայի ամբիոնում եմ դժվարանում

20. Օնլայն դասագրքերի փոխարեն մեզ տրամադրվեին դասագրքեր

21. Ավելի շատ գործնական հմտություններ ու Նեղ մասնագիտական գիտելիքներ

22. Es aveli hamaxmbac kdarcnei ambionner@

23. ընթացիկ գնահատականներ ստանալ ակտիվության և դասին պատրաստ լինելու համար,որոնք կգումարվեն և բոնուս կհանդիսանան ուսումնառությանը:

24. Fiziologya ararayi tenamery shat en isk trvac jamanaky qich ,nayev testery kazmvum en buhi makardaki ,angam harcery krknvum en buhi testi mejic,fizikologiayi cikli jamanak (7or)talis en ahreli mec informacia vory anhnar e hishel aydqan qich jamanakahatvacum ,andam dasaxosy dasaporcesi jamanak chi hascnum amboxjutyamb bacatrel

25. Առարկաների տևողության վերանայում

26. Դասախոսների որակավորման և ուսանողների հանդեպ շփման վերանայում

27. Դասերը շուտ սկսեն

28. Ավելի շատ պրակտիկաներ և մասնագիտական առարկաներ

29. Դասերը տրվում են ահռելի մեծ քանակությամբ, իսկ պահանջում են շատ քիչ ժամանակում յուրացնել այդ թեման: Ֆիզիոլոգիան 4 օրվա համար նախատեսված նյութը տրամադրվում է հիսուն և ավելի էջով

30. ձեռներեցության 2 շաբաթանոց ցիկլի փոխարեն 2 շաբաթանոց ֆիզիոլոգիայի ցիկլ:

31. ավելի կքչացնեի երկրորդային առարկաները

32. Ուսուցիչների կողմից առավել լավ վերաբերմունք

33. Ավելի արդյունավետ դասաժամերը դարձնելու համար կցանկանաի առաջարկել, որ որոշ դասախոսներ դասաժամիջոցներին դաս չանկացնեն